



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հունիսի 2024 թվականի N 232-Ա

«ԱՐԱՎՈՒՍԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆԱՐԻՆԵ
ՋՀԱՆԳԻՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՑԶԻ ՕԳՆԱԿԱՆ ԼԻԼԻԹ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով «Արավուսի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Ն. Զհանգիրյանի դիմումը՝

ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. «Արավուսի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Նարինե Զհանգիրյանին 2024 թվականի հուլիսի 1-ից օգոստոսի 5-ը ներառյալ տրամադրել 2023-2024 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդը՝ 25 աշխատանքային օր:

2. Արձակուրդում գտնվելու ընթացքում «Արավուսի տարրական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության ուսուցչի օգնական Լիլիթ Հայրապետյանին:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2024թ. հունիսի 27
ք. Կապան